Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ՀՀ Շիրակի մարզի <<Հացիկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի աշխարհագրության(8դասաժամ) և մաթեմատիկայի (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում՝(Ձև 1),

-մեկ լուսանկար3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն(Ձև 5),

-այլ պետությունների քաղաքացիները՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝նաև զինվորական գրքույկ,

-հրապարակված հոդվածների ցանկ ,կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում)

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ,կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ-ի սեպտեմբերի 5-ից մինչև սեպտեմբերի 18-ը ներառյալ,ամեն օր՝ժամը 10.00-ից 15.00-ը, բացի շաբաթ ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 25-ին՝ժամը 14.00-ին, Շիրակի մարզի Հացիկի միջնակարգ դպրոցում,հասցեն գ.Հացիկ ,13 փողոց,1-ին փակուղի,3-րդ շենք;Տեղեկությունների համար զանգահարել 093-26-71-26 հեռախոսահամարով: